

Արշավի հիմնական պայմանները

1. Ընդհանուր դրույթներ

Սույնով (այսուհետ՝ «Առաջարկ») սահմանվում են արշավի (այսուհետ՝ «Արշավ») պայմաններն ու կանոնները: Մասնակցելով Արշավին՝ Դուք հայտարարում եք, որ լիովին և անվերապահ ընդունում եք Առաջարկի այս պայմանները:

Սույն Առաջարկը համարվում է մարքեթինգային միջոցառում:

2. Կազմակերպիչ

2.1. Արշավն իրականացվում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից (հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1):

2.2. Արշավն անցկացվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

3. Արշավի ժամկետ

3.1. Արշավի հայտարարությունը տեղադրված է Բանկի կայքում՝ https://benefits.conversebank.am/hy/current-promotions/item/2022/12/27/MC_Converse_22/:

3.2. Արշավն անցկացվում է 2022 թվականի դեկտեմբերի 25-ից՝ ժամը 00:01-ից մինչև 2023 թվականի փետրվարի 28-ը՝ ժամը 23:59:

3.3. Արշավի արդյունքների ամփոփումն իրականացվելու է յուրաքանչյուր ուրբաթ և համապատասխան կողերն ուղարկվելու են մասնակիցներին sms (կարճ հաղորդագրության) ծանուցման միջոցով:

3.4. Սույն Առաջարկում նշված ժամկետները հաշվարկված են Երևանի ժամանակով:

4. Արշավի մասնակիցներ

4.1. Ֆիզիկական անձ, ՀՀ ռեզիդենտ հաճախորդներ (այսուհետ՝ Հաճախորդ), ովքեր կկատարեն միանվագ, նվազագույնը՝ 10,000 ՀՀ դրամի չափով մեկ գործարք Mastercard քարտատեսակով և Google Pay վճարային համակարգով:

4.2. Մրցույթին կարող են մասնակցել 18 տարին լրացած ֆիզիկական անձ Հաճախորդները, բացառությամբ Բանկի աշխատակիցների:

5. Արշավին մասնակցելու կանոններ

5.1. Արշավին մասնակից դառնալու համար հարկավոր է Կոնվերս Բանկի Mastercard-ը կցել Google Pay վճարային համակարգին:

5.2. Mastercard քարտ/եր-ով հարկավոր է կատարել միանվագ հանրագումարային նվազագույնը 10,000 ՀՀ դրամ և ավելի անկանխիկ գործարք/ներ Google Pay վճարային համակարգով Արշավի անցկացման ժամանակահատվածի ընթացքում:

5.3. Եթե Հաճախորդը կցել է Mastercard-ը Google Pay վճարային համակարգին, կատարել է միանվագ հանրագումարային նվազագույնը 10,000 ՀՀ դրամ գործարք, ապա Հաճախորդը համարվում է Արշավի մասնակից:

5.4. Առաջարկի 5.2 կետում նշված կանոնները կատարելու դեպքում Հաճախորդին ուղարկվելու է sms (կարճ հաղորդագրության) ծանուցում յուրաքանչյուր ուրբաթ՝ սկսած 13.01.2023թ.-ից:

5.5. Յուրաքանչյուր քարտ Արշավին կարող է մասնակցել միայն մեկ անգամ (ներառյալ՝ կից և հավելյալ քարտերով կատարված գործարքների):

5.6. Կատարած յուրաքանչյուր նվազագույնը 10,000 ՀՀ դրամ ընդհանուր գումարի գործարքի դիմաց մասնակիցը ստանում է մեկ անհատական կոդ, որով կստանա կինոյի տոմս երկուսի համար:

5.7. Կոդերը տրամադրվելու են շաբաթը մեկ անգամ ուրբաթ օրերին:

5.8. Արշավի ընթացքում ստացված տոմսերը վավեր են մինչև 2023թ.-ի մարտի 31-ը ներառյալ:

5.9. Քարտից քարտ փոխանցումները, քարտից այլ հաշիվ փոխանցումները, կոմունալ վճարումները (ներառյալ՝ հեռահաղորդակցման, հեռուստատեսության, ինտերնետ ծառայությունների վճարները), հաշիվների, քարտերի, էլեկտրոնային դրամապանակների համալրումները, վարկի մարումները, խաղատների և շահումով խաղերի խաղադրույքների, վիրտուալ խաղատների և խաղադրույք ընդունող ընկերությունների հաշիվների համալրումները, պետական մարմինների ծառայությունների դիմաց վճարները, տուրքերը, տուժանքները, օրենքով պարտադրված հարկերի վճարները, մուծումները, այլ վճարները և Բանկի ներքին համակարգերով իրականացված գործառնությունները չեն մասնակցում անկանխիկ գործարքների հաշվարկին:

5.10. Անկանխիկ գործարքների ծավալի հաշվարկը կատարվում է հետևյալ սկզբունքով՝ ՀՀ դրամ արժույթով քարտերի դեպքում հաշվարկին կմասնակցի հաշվեգրված գումարի դրամային արտահայտությունը, իսկ արտարժույթային

քարտերի դեպքում՝ քարտի արժույթով հաշվեգրված գումարը՝ փոխակերպված դրամի հաշվեգրման օրվա համար սահմանված ՀՀ ԿԲ փոխարժեքով:

5.11. Բանկը մասնակիցներին մրցանակի փոխարեն գումարային փոխհատուցում չի իրականացնում և մրցանակը չի փոխարինում այլ նվերով:

5.12. Բանկը պատասխանատվություն չի կրում POS տերմինալների և EPOS-տերմինալների խափանման (այդ թվում՝ կապի), անսարքության պատճառով չիրականացված կամ ոչ պատշաճ իրականացված անկանխիկ գործարքների համար:

5.13. Բանկն իրավունք ունի հրաժարվելու մրցանակներ տրամադրելուց, եթե Արշավի մասնակցի կողմից կատարվել է Արշավի պայմանների խախտում և/կամ զեղծարարություն և/կամ չարաշահում:

5.14. Բանկի հաղորդակցման տվյալները
Հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել +374 10 511211 հեռախոսահամարով
- Email՝ info@conversebank.am
- Viber՝ +374 95 511211
- Skype՝ [conversebank-callcenter](https://www.skype.com/join/conversebank-callcenter)